

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամբողջատան մէջ:

Օտարապետացիք չիմում են ուղղակի
Դպրատն. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունում է տոնն լիովնով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԷԶՄԻԱԾԻՆ

Մեր ազգային ուսումնարանները գործը ամբողջ դարերի ընթացքում եղել է մինչև այսօր էլ է մեր հոգեւորականների ձեռքում: Եկեղեցին և դպրոցը մեր մէջ սերտ կապերով են եղել կապված իրար հետ. շնուկ է եկեղեցի, նրա կից հիմնվել է դպրոց: Մեր ուսումնարանները, լինելով այսպիսի հանգամանքների մէջ, անկասկած կարող էին նախանձելի գրութեան հասնել, եթէ այդ ուսումնարանների առաջնորդները, մեր հոգեւորականները, փոքր ի շատէ զարգացած անձինք չի նէին:

Էջմիածինը օրըստօրէ աւելացնելով տգետ հոգեւորականների թիւը, ուղարկելով այդպիսիներին հայաբնակ տեղերը ժողովուրդին հովուելու, զբանջ ձեռքն էր դրում ազգային բարոյական և մտաւոր կրթութեան գործը: Մի քահանայ, ինքն թէ բարոյական և թէ մտաւոր կրթութեանը զուրկ լինելով, մինչև անգամ հաղիւ հազ կարդալ իմանալով, բայց է անուժ դպրոց, հաւաքում է մանուկներին, ամբողջ տարիներ է պահում նրանց իր ուսումնարանում, որովհետեւ մի կողմից նրանցից իւրաքանչիւրը տէր չօրը տարեկան մի քանի ռուբլ եկամուտ է տալիս և միւս կողմից հարկաւոր եկած ժամանակն էլ տէրտէրի կամ տիրացուի ընտանեկան ծառայութիւններ է կատարում: Տէր-հայրը ինքն սուրբ գիրք հաղիւ է կարդում և իր դասատուութիւնը սկսում է նոյն իսկ սուրբ գրքից. ի՞նչ անէ ողորմելին, որ նա ուրիշ գրքերի գոյութեան մասին հասկացողութիւն անգամ չունի: Ուր որ նա յէիք, ամեն տեղ մի և նոյն տիրապի երեւոյթներն էին կրկնվում և կարող ենք խոստովանել, որ մինչև այսօր էլ կան շատ և շատ տեղեր, ոչ թէ ընկած գիւղերում, այլ մինչև անգամ քաղաքներում, որտեղ այս տեսակ երեւոյթները գեւ տեղիք ունեն:

Ե՛հա՛ այս տեսակ մանկավարժա-

ների շնորհիւ խեղճ երեխաները փոխանակ ուսում ստանալու, փոխանակ զարգանալու, ամբողջ տարիների ընթացքում սխառեմաբար բխանում էին:

Եպագան ոչինչ էր խոստանում և բացի վերջնական կորուստից էր կարող խոստանալ, եթէ ազգային մտաւոր և բարոյական զարգացման մէջ չը սկսէին մտահեղեղ ոչ-հոգեւորականները. մի կողմից ստեղծվեց մեզանում մոմուլը, միւս կողմից աշխարհականները, փոքր ի շատէ ծանօթանալով ժամանակակից պահանջների հետ, ուսման հետ, ձեռք են մեկնում հոգեւորականներին ուսումնարանների գործերը առաջ տանելու համար: Հէնց այդ օրից, կարելի է ասել, սկսվում է հայերի վերածնելութիւնը, յարուցանվում է յայտը:

Թէև այս քաղեիս էլ չենք կարող պարծենալ մեր դպրոցներով, բայց այնու ամենայնիւ չենք կարող չը խոստովանել, որ կայ մի առանձին ձգտումն նրանց բարեփոխելու համար: Մեր դպրոցները ղեւ գոցէ շատ շատ տարիներ լինեն անմիջական գրութեան մէջ, մինչև մեր երիտասարդութիւնը չը դադարի ամբողջ գնդերով դիմել դէպի իրաւաբանութիւն, բժշկականութիւն ուսանելը և մանկավարժութեան վրա ամենէին ուշադրութիւն չը դարձնի, իսկ Էջմիածինը իր կողմից չը դադարի աճեցնել անպատրաստ հոգեւորականների թիւը, որոնք բնականապէս ժողովուրդի, մանաւանդ գիւղերում, համարեա միակ դաստիարակիներ են:

Եյս տարի, ինչպէս լրագրողները մեզ հաղորդեցին, Էջմիածինը արաւ մի համակրելի քայլ դէպի առաջ, նա իր հաշուով ուղարկեց իր ուսում ստացած վարդապետներից միին արտասահման մանկավարժութեան մէջ կատարելագործվելու: Եյս լուրը, իբրեւ մի նշոյլ, որ Էջմիածինը սկսում է արթնանալ իր խորքից, ուրախութիւն պատճառեց շատերին, բայց մի միշտ յետագէմ թերթը այս դէպքումն էլ չամառեց աղաղակել զբաւ դէմ: Ի՞նչ հարկաւոր էր ի գուր տեղ փողեր ծախսել աւսում էր վերոյիշեալ թերթը. այն ուսումն էլ բաւական էր, ինչ ստացել էր վարդապետը... և այլն:

Մենք համոզված ենք, որ Էջմիածինը եթէ արել է մի

այդպիսի քայլ, ուշադրութիւն չի դարձնի այդ տեսակ յանդիմանութեան վրա և փոխանակ իր հոգեւորականներին տուփը ձեռքին տալու և նրանց ամեն հայաբնակ քաղաքներ ուղարկելու հանգանակութիւն անելու համար, այսուհետեւ իր սրբազան պարտաւորութիւն կը համարի հոգեւորականութեան մտաւոր զարգացման նպաստելը:

Յայտնի է, որ առաջինից տաւրայ ամառը լինելու են հայոց ուսուցչական ժողովներ: Նախապատրաստական նպատակով կազմած մասնագործներ անկարելի է նիւթական միջոցներ գտնել ամեն չքաւոր ուսուցչի թիֆլիս գալու և մի երկու ամիս այսպիսի թանդ քաղաքում ապրելու համար:

Իսկ մանաւանդ մեր այն հոգեւորականների համար, որոնք ցրուած են զանազան գիւղերում և մանկավարժութեան վրա ամենէին զաղափար չունենալով, ուսուցչական պաշտօններ են վարում, այդ տեսակ ուսուցչական ժողովներին ներկայ դառնելը մենք ոչ թէ միայն օգուտաւէտ, այլ միանգամայն անհրաժեշտ ենք համարում:

Էջմիածինը բազմացրել է այդ ուսուցչիների թիւը, նա սխալ է գործել, թող գտնէ այժմ, երբ միջոց է տրվում նրան իր սխալը փոքր ի շատէ ուղղելու, իր դէմքը ուրիշ կողմ չը դարձնի, նա պարտական է ազգի առաջ միջոցներ որոնել և ամեն կերպիւ աշխատել, որ հոգեւորականներ-ուսուցչիներն ևս ներկայ գտնվեն ուսուցչական ժողովներին: Նրանք այստեղ կարող են գաղափար ստանալ առհասարակ ուսումնարանի պահանջների վրա, կը լսեն օրինակելի դասեր և այլն, մի խօսքով, այստեղ կարող են փոքր ինչ կրթվել:

Թող Էջմիածինը, եթէ ուրիշ միջոցների չէ կամենում կամ չէ կարող գիմել իր ուսեալ հոգեւորականների ճարտարութիւնը այս անգամ գործ զնէ այդ նպատակի համար, կարող ենք հաւատացնել նրան, որ սա հազար անգամ աւելի կարեւոր է, քան Էջմիածինի ձեռնարանի ննջարանը:

Եւ ինչպէս իրաւագործները մեզ հաղորդեցին, Էջմիածինը արաւ մի համակրելի քայլ դէպի առաջ, նա իր հաշուով ուղարկեց իր ուսում ստացած վարդապետներից միին արտասահման մանկավարժութեան մէջ կատարելագործվելու: Եյս լուրը, իբրեւ մի նշոյլ, որ Էջմիածինը սկսում է արթնանալ իր խորքից, ուրախութիւն պատճառեց շատերին, բայց մի միշտ յետագէմ թերթը այս դէպքումն էլ չամառեց աղաղակել զբաւ դէմ: Ի՞նչ հարկաւոր էր ի գուր տեղ փողեր ծախսել աւսում էր վերոյիշեալ թերթը. այն ուսումն էլ բաւական էր, ինչ ստացել էր վարդապետը... և այլն:

ՆԵՐՈՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օտարանալի է, թէ մեր հասարակութիւնը օրքան փոքր է ըմբռնում իր ազգի լուսաւորութեան գործը, որքան անասրեր է դէպի ամենայն ձեռնարկութիւն, որ ազգային է: Եւ այդ հանգամանքն աչքի առաջ ունենալով՝ համարձակ կարող ենք ասել, որ Թիֆլիսում հասարակութիւնը չը կայ. միայն մի քանի անհատներ կան, որոնք լինելի ու փողի ներկայացուցիչ համարվելով՝ ամեն հասարակական գործերի մէջ ևս ցոյց են տալիս իրանց մարդկային ամենապարզ օգուտ թիւնը և ամենաբարձր օգուտ թիւնը: Մի և նոյն անձինք, որոնք մի անգամ գիտութեամբ, թէ անդիտութեամբ, կամայ, թէ ակամայ ընտրվել են մի ընկերական ձեռնարկութեան մէջ՝ միշտ էլ երևում են ուրիշ բոլոր նմանօրինակ գործերում: Արժեք, մի առանձին աստուածային ազդեցութեամբ են սահմանված նոքա, որ ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ վերջնաւոր չեն: Իսկ այս ցաւալի երեւոյթը մեր հասարակութեան մտաւոր անշարժութեան տխուր հետևանքն է:

Հեռու չը գնանք: Ընդհին 19-ին Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի համար պէտք է ընտրվի մի հոգաբարձութիւն: Եւ կոնսիստորիայի միջնորդութեամբ անմեն հայոց եկեղեցիներում ծանուցումներ դաւ, որ նոյնանից իւրաքանչիւրը իր ժողովրդի միջոց երեք պատգամաւոր ընտրի: Երբեք մեծ մասամբ պատգամաւորների ընտրութիւնը կայացած է: Բայց ինչպէս են ընտրվել նոքա. ինչպէս են ընտրվել այն անձինք, որոնցից է որոնց ձեռքով պէտք է ընտրվեն հայոց միակ ազգային դպրանոցի ղեկավարները: Ստանդին անգամ ցաւալի է: Խօսք չը կայ, որ անշահ բացառութիւններ կը լինեն: Բայց, որքան մեզ յայտնի է, մեծ մասամբ չեն ընտրված ինչպէս հարկն է: Ընդհին 5-ին աւագ փամ աւագ համարող քահանաները պէտք է յայտնեն իրանց ժողովուրդին ընտրելու մասին: Այսպէս ո՞ր չը գիտեն որ մեր քահանաներից ինչպէս ամեն ազգային գործերում, նոյնպէս և այն գործերում, կախված է շատ բան թէ յարաշարժութիւն և թէ յետադիմութիւն, թէ լոյս և թէ խաւար: Բայց տե՛ր է են աճը, որ բռնի էն խաչը: Քահանայ պէտք է լինուի: Եւ իսպառ բարոյող լինի: Բայց սովորաբար քարոյութիւնը մեր քահանաների համար մեծ պատ է: Վախի է իսկական մեծ պատ և նոքա սկզում են քարոյող ինտուրադում են սատանայի շարժողութիւնը, հրկշտակի բարեգործութիւնը, դժոխքի սարսափը, մտքի կամոյքը կարեւոր կարող են հայրապետների ու օրբերի ճշմարտական իրանքը և այլ այդպիսի բովանդակութիւն: Ունեցող արեւմտեղական փեխուփաշ յաւթիւններ, որոնցով ժողովուրդին մի քայլ յառաջ տանելու փոխանակ՝ դիւ մի քանի քայլ էլ յետ են տանում: Երբեք, բա-

ցառութիւն կայ. բայց անձրեւի կաթիլը ծովի մէջ անհետանում է:

Իսկ մի այսպիսի նշանաւոր դէպքում, երբ իւրաքանչիւր քահանայ մեծ պարտականութիւն ունի կատարելու. երբ նա պէտք է բացատրի իր ժողովրդին նախ՝ ազգութեան գաղափարը, ապա նորա միակ դրպարանոցի բարձր նշանակութիւնը ուստա-հաս-յոցս համար. երբ նա պէտք է բացատրի ժողովրդին, թէ գլխաւորապէս կրթված, գործունեայ և դպրանոցի ղեկը իրանց ձեռքը առնող հոգաբարձուներ են հարկաւոր դպրանոցին. երբ պէտք է հասկացնի, որ այդպիսի հոգաբարձուներ ընտրելու համար էլ հարկաւոր են բանիմաց և դպրոցական գործին ի մօտուստ ծանօթութիւն ունեցող անձինք,—հա՛ւ մի այսպիսի ծանր ժամանակ, նոքա մեծ մասամբ բաւականա-նում են մի աշխարհի մի քանի համա-ն ու ու մե ու ծ խօսքերով ծանու-ցանել ժողովրդին, թէ. «Երեսիսան դրպարոցին հոգաբարձուներ են հարկաւոր. ուրեմն ընտրեցէ՛ք ձեր միջից երեք՝ պատգամաւոր, որ զնան ու հոգաբարձուք ընտրեն»:

Իսկ այն է, որ ինչպէս լսել ենք մի քանի քահանաներից, արդէն նոյն օրն և եթ եկեղեցում ներկայ գտնված մի քանի անձինքներից ընտրել են պատգամաւորնե-րը: Բայց ինչո՞ւ ամեն 19-ին լինելու հո-գաբարձական ընտրութեան մասին 5-ին են ծանուցանուում, երբ նոքա նոյն օրն և եթ պէտք է պատգամաւոր ընտրեն: 2-րդ 14 օր տուած ժամանակն այն նպատակով է միայն, որ որքան կարելի է, լաւ մտած-ված լինի խնդիրը, որպէս զի ընտրվել անձինք լինեն այնպիսիք, որոնք յիրաւի կարող են արդարացի իրանց ընտրող ժո-ղովրդի յոյսերը:

Իսկ Զորաբաշխ. ս. Գեորգ եկեղեցում մինչև անգամ աւելորդ համարելով ժողովը-ղին առաջարկել այդ ընտրութիւնը՝ իրանք երկու քահանաներն են ընտրում իւ-րանց ցանկացած անձանց: Արծես, ժողովուրդն իրանք են: Եւ ի՞նչ ենք լուում: Պատգամաւորներից մէկը՝ մի քիչ միջ ծա-խող հաստ ափ օր վաճառական է, որ մեր երէց փոխանական հաշուե-տուութեան օրը վարդապետին պա-րուն հայր սուրբ ջանն ասելով էր դիմում:

Գուցէ, ընթերցողը կարծում է, որ մենք մեզ ընտրելու համար ենք խօսում: Թող այդպէս էլ կարծի: Մենք ամենայն իրա-ւամբ կարող ենք պահանջել, որ քիչ միջ ծախող փոխանակ մեզ ընտրեն: Եթէ ժամաւորին կարելի է ընտրել, ինչո՞ւ չի կարելի ընտրել մեզ, որ ոչ միայն նոյն եկեղեցու ժամաւոր, այլ և ծուխ ենք ու երէց փոխան՝ թէպէտ այդ վերջին տիպոսով մենք չենք պարծենում: Մենք այդպիսի ընտրութիւն՝ թէ՛ քահա-նայից և թէ՛ ժողովրդի կողմից ըստ ամե-նայնի անկանոն ենք համարում: Ու-րիշ բան է, եթէ յարմարաւոր անձն չու-նենայու պատճառով լինէին այդպէս անե-լիս. բայց երբ կայ, ի՞նչ հարկն է ստի-պում այդպէս վարել, եթէ խաւար կիրքն ու կոյր նախանձը չեն գլխա-ւոր դեր կատարողները: Իսկ մեր պատգամաւոր ընտրվելու ցանկութիւնը ոչ թէ այն պատճառով է, որ «Երեսիսան գաղափարումն էլ հոգաբարձու ընտրվենք, որ մեր մտքովն անգամ չէ կարող անցնել այլ այն է, որ մեր եկեղեցին էլ կարողանայ տալ այնպիսի անձինք, որոնք կարող են այն օրինաւոր պատգամաւորների շարքումը դառնալ, որոնց անձնաւորութիւ-նը կարող է երաշխաւոր լինել լաւ հոգա-

բարձութիւն ընտրելու մասին՝ հեռու ամե-նայն փաստար կրքերից: Ուրիշ ոչինչ:

Յ. Նազարեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Հոկտեմբերի 18

Մարդկութեան կեանքի մէջ Բաժնի-թումաւ-Ֆէնդիսներից պատահ չէ: Մայն պիտի հրէշաւոր երեւոյթներ յաճախ պա-տահել են, և կը պատահեն ամենայն ազգի շրջաններում, որոնք իրանց պախարակելի կրքերին յազուրդ տալու նպատակաւ ամե-նայն անազնիւ և կեղտոտ միջոցներ ազա-տօրէն գործ են դնում, միայն թէ նպատա-կահաս լինեն իրանք: Զը նայելով որ շատ անգամ ընդհանուր իտալեանները անմեղ զոհեր են դառնում իրենց կեղտոտ կապրիզ-ներին, այնուամենայնիւ ոչինչ նշանակու-թիւն չունի նրանց համար ընդհանուրը, մինչդեռ անձնական շահ են նշմարում ընդհանուրի ոչնչութեան մէջ:

Եւ տեսակ մարդկանց ճիշդ տիպարն է ներկայացնում այսօր մեր տէօզոֆ «Մե-ղուն», որին շատ առեկի է ներկայիս պա-հանջը, որին շատ անհաճելի է ըմբռնել զուտ ճշմարտութեան սկզբունքը, որը չէ կամենում համոզվել որ ազգայնութեան գոյութեան նեցուկ տարրն է հայրենիքը և լեզուն, որը վերջապէս չէ ուղում եկեղե-ցու չորս պատերից դուրս հայ ճանաչել:

«Մեղուն» ինքնահասանութիւնը ծայ-րայեղութեան է հասնում: Խմբագիրը իրանց զուտ բոլորին սեփական համոզմուն-քից դուրս, բնական հասկացողութիւնից ազատ և ազատ գատողութիւնից խորթ է համարում: Եւ ինքնահասանութեան նողկալի պատկերը:

Իսկ ես էլ կասեմ որ «Մեղուն» բո-լոր արտայայտած գաղափարները, գրած յօդուածները և ծուռումուռ դատողու-թեամբ ու անորոշ եզրակացութեամբ մրո-տած թղթերի տարածելը, հետեանք է իր սարսափելի բախտանդութեան և իր վատթար շահամոլութեանը: Հաճամուր-թիւն և բախտանդութիւն ասելով՝ պէտք է ապացուցանել փաստերով: «Մեղուն» ի՞նչ վատութիւն նշմարեց «Մշակի» յայտ-նած նպատակի մէջ, որն էր չը հալածել ու չատել այդպիսի հային, որ նա այս-քան ձիգ պաշտօնական խնդր չլինեց: Դի-ցուք թէ «Մշակի» երգիւկ թշնամին է, բայց այսպիսի օգտակար միտք, մեր կար-ծիքով առիթ չը պէտք է տար «Մեղուն» իր սարսափելի հակակրօնութեան թոյնը թա-փել:

«Մեղուն» խմբագիրը այս ըստ բնակա-նին արդիւնաւէտ քարոզը ծուռումուռ մեկնելով՝ իրան ձեռքում մի գործիք չլինել ուզեց: Իր սրտի դառնախորհուրդ գործա-րանի հայաճումն մի բրիչ կապեց, և նրա-նով կամեցաւ քակել ու արտաքսել ամբոխի յետադէմ գլուխների առեկութեան քարերը, որով կարողանայ քարկործել «Մշակի» խմբա-գրին, կարծելով որ այդպիսով իր թերթի տարածմանը նպաստաւորած կը լինէ: Ա-ղարշապատի մէջ անշարժ տիրող կրօնամո-լութեան մթնոլորտին զոհված մի քանի իր նման ֆանատիկոսների համակրական ցոյցերը «Մեղուն» կռանքը արծարծեցին, և սկսեց դա լուսել օլիմպիական բարձրու-թիւնից: Ազգութիւն, հայրենիք, ցեղ, ամբ-բողջութիւն և այլն ուզեց հասկացնել որ պարփակվում են եկեղեցու չոր ու ցամաք պատերի մէջ: Ի՞նչ ֆէրմի լաւ աստուածա-գիտական հանձար է...: Կախապաշար-ված պապերի համակրութիւնը վայելելու, և «Մշակի» յարգը թարմ ոյժերի մօտ

ոտնակոխ անելու պատրուակով, ամենաան-ազնիւ և ազգակործան միջոցների է դիմել, այն ասորի՝ դիւրահաւատ լինելով՝ որ կարծում է թէ ամբողջութիւնը անպայման հպատակելու է մի բախտանդորի հեղի-նակութեանը, որին շատ խորթ է թվում ըմբռնել կենդանի կեանքի բարօրութեանը նպաստիչ սկզբունքն: Եւ այս երեւոյթը ուրեմն բախտանդութիւնն է, ի՞նչ է:

Ես ինձ թոյլ եմ տալիս «Մեղուն» մի համեստ առաջարկութիւն անել: Թող նա փաստերով ապացուցանէ որ այժմեան մահմետական պարսիկները բուն պարսիկներ չեն: Որ նրանք կորցնելով իրենց զբաղաշա-կան օրէնքը և սրա հեղինակ մեղերին իրանց ատուղաններով, և փոխարէնը ընդունելով Եւրաքայի մարգարէի վարդապետութիւնը և նրա քարոզած Եւլաճը, արդեօք նրանով պարսկականութիւնը կորցրին, և պատուա-տվեցան հազարական ազգութեանը կոճ-ղին: Պարսկական ազգային ինքնուրոյն յատկութիւնը, նրա առանձնացող արմա-տական տարրը և ազգութեան հիմնական պայմանները կ'ու-ղ գնացին կրօնական նոր վարդապետութեան լարելութեանը: Թէ ազգութիւնը ընդունելով խղճի համոզ-մունքի առաջինը տարբեր երկրորդ առա-կան, մնաց կրկին նոյն ազգութիւնը, ինչ որ էր յառաջ, իր ազգային սահմանացու-ցիչ յատկանիշներով, որպիսին է հայրենիքը, լեզուն և ցեղը: Ուրեմն թող «Մեղուն» հաճնայ այս հարցը վճռել և այնու յետ ես, դու, երրորդը և չորրորդն էլ իրեն կըն-կերանանք, որպէս զի աւելի զիւրութեամբ քարկոծ անէ «Մշակի» խմբագրին, որ սա կրօնի նշանակութիւնը ազգութեան նշա-նակութիւնից արբեր գաղափար ընդունե-լով՝ ազգի տունն է քանդում:

Յամառութեան չափազանցութիւնը մեր կարծիքով ազգայնութեան և մեռելութեան նշան է: «Մեղուն» խառնաշփոթ սկզբունք-ները ժամանակի սրնթաց հոսանքի անիւ-ների ճնշողութեան տակ զսփլելով և մաքրվելով կողովին անշուշտ, նա ժամա-նակով կը համաձայնվէ որ իր ներկայ վարդապետութիւնը լոկ կրօնամոլների հա-մակրութիւնը դէպի ինքը քարշուռ մտքի ծնունդ է միայն, որ իր ներկայ ուղղու-թիւնը որսորդական բազմազանի ծածա-նող այն գործիքն է, որով որսորդները թըռ-չուններին աչքերը շրջնելով՝ դիւրութիւն են ունենում մօտուստ մահացնել նրանց: Սակայն ցաւալի է որ մինչ այն ժամանակը անօգուտ թղթեր է մրտաւել, գուցէ և շատերի ֆանատիկոսութիւնը կը գրգռէ, որից տխուր հետեանքներ կարող են առա-ջանալ:

Յաւալի է և այն ժողովրդի վեճակը, որի բարոյականութեան և մտաւոր կրթու-թեանը ներկայացուցիչ հանդիսանալ են նկրտում յանգուզն Պետրոսներ-Սիլվեստեր, Սուր-Սէրբեր-Սարսարներ (ըստ «Մեղուն» յատուկ դիւանի) իրենց նեխածափը-տած ազգասիրութեամբ:

Հմայակ

ՆԱՄԱԿ ՅԱՐՈՒՅԻՆԻՅ

22 հոկտեմբերի

Եւնք՝ ճարիցին լուսաւորական հայերի փորձիկ խումբը, որ հեռու ենք ազգի կենտրոնից, անհամբերու-թեամբ համարում ենք վարկեանները, Թէ երբ կը ստա-նանք մեր հայկական պարբերական Թերթերը, որոնցից կը բաղկեն մէկ միլիարդական լուր մեր ազգային ներկայ վիճակից, բայց մեր յոյսը մեծ մասամբ գուր-է անցնում ժամանակակից անհրաժեշտ հարցերի քնն-նդատութեան փոխարէն կարգում ենք կրօնական խնդրի մասին վիճաբանութիւն: Երբ մարդը նայում է «Մեղուն» կողմից բռնած ընթացքի վրա, չը գիտէ ինչ

մտածէ: Ակամայ մարդը մտաբերում է այն կամակոր-բերիային, որ ամեն տեսակ անարդարք եւ պատիժ ստանում է իր ուսուցիցից, բայց այնու ամենայնիւ չէ կրկնում այն բառը, որի համար ստիպում է նորան ուսուցիցը: Այսպիսի արարք ճշմարիտ է, որ մեղանից ամեն մէկը մեր կեանքի մանկութեան օրերի մէջ— ոչ առանց բացառութեան—ունեցել ենք, սակայն եկել են օրեր, որ զղջացել ենք մեր կամակորութեան հա-մար: Իսկ «Մեղուն», որ այժմ երեւոյթ է, այլ կատա-րեալ չափաւոր մարդ է լինի—այժմ արդէն քանակներորդ տարեկան է—տակաւն երեխայական կամակորութիւն չէ ցանկանում Թողնելու եւ չէ զղջ-նում ոչ իր անցեալի վրա եւ ոչ էլ ներկայի ու ապա-գայի մասին մտածում: Կամակորութիւն չէ արդեօք տեղ տալ մի այնպիսի անհատի նամակին, որպիսին է պ. Սարգիս Ղազարեան Նազարեանց: Պարոն Նազարեանցը մի՞թէ չը գիտէ, որ ոչ մի լրագրի բաժանորդութեան փողը յետ չէ տրվում: Բայց պ. Նազարեանցը եթէ չէ կամենում կարգաւ «Մշակը», որովհետեւ լուսաւոր դարի նոր դաղափարները նրա հիմաւոր գաղափարների համար անմարտելի են,—խորքեւ Թողնել մ'նայ առանց կարգաւ եւ եկող տարի այլ եւս չը գրվի, հուսաւա-ցած լինի, որ նրա կորուստը բնաւ զգալի չի լինի ոչ «Մշակի» եւ ոչ այլոց: Հրաւիրում ենք պարոնին մէկ անգամ կամակորութեան զգացմունքը մի կողմը դրած կարգաւ «Մշակի» № 181 առաջնորդող յօդուածը «Վերջ չը կայ»: Արդեօք դորան է համարում դէպի անդունդ զորող գաղափարը: Միտմունքը միշտ շատ վատհոգեամբ են խօսում եւ պարոնն էլ արտասա-նում է նամակի վերջում, որ «Մեղուն» քաջ պաշտպան է ազգի շահերին: Թող պ. Նազարեանցը խօսի միայն իր համար առանց ազգին խառնելու, մենք կարծում ենք որ «Մեղուն» Թերթերից, որպէս զրում է պ. Պօ-սիք Հայկապոլ, Թարգմանում են եւրոպացոց լեզու-ներով, յայնժամ այդ նրանց յիշած ազգի դրուժները ինչ կը լինի, ոչ ապաքէն եւ նորա տանիքներից ոչ-ինչ բարձր տեղ կունենան: Եւ տակաւին քաջ պաշտպան ազգային շահերի» տիտղոսը բարեհաճում են «Մեղուն» առատապէս տալ: Բայց մեզ անհրաժեշտ է մինչեւ այժմ «Մեղուն» ազգային պաշտպանողութիւնը ինչի մէջն է արտայայտվել: Եթէ գտնուէ և ազգային գաղափարների պաշտպանութիւնը «Մեղուն» յետամնաց գաղափարների մէջ,—պէտք է ասեմ՝ սաստիկ սխալ-վում է:

Խօսելով համարձակապէս ազգի ամբողջութեան կող-մից, մենք վատհոգեամբ ասում ենք, որ նոր սերուն-դը նոր գաղափարներ է սպասում լուսաւոր դարի առաջնորդներից, միանգամայն ուշ չը դարձնելով ոմանց պառակաւ մաշված խօսքերին:

Աղասի Զախմայապետանց

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՅ

Հոկտեմբերի 22

Ամոյս 19-ին տեղիս հոգեւոր ուսումնարանի դա-լիմում ուսուցչական խումբը տուեց մի ներկայացում հայերէն լեզուով յօդուտ դպրոցի: Ներկայացրին Վե-րդպետ Բոստան: Ներկայացումն անպատեղի լաւ անցաւ եւ մեծ տպաւորութիւն արեց ժողովրդի վրա, որ մեծ բազմութեամբ լցրել էր դահլիճը: Ինձ պատահեց Թիֆլիսում տեսնել այդ դրաման մշտական խմբի ներկայացումներից մէկում, եւ պէտք է խոստո-վանեմ, որ բացի բնական շրջողութիւնից, որ անշուշտ ունի Թիֆլիսի Ամարայի Թատրոնը, սիրողների խմբի խաղը շատ փոքր տարբերութիւն ունէր դերասանների խաղից: Գ. բժ. Կաթիլանցանց, որ խաղում էր Լեզու-կի եւ Գիւրգուսի դերերը, ցոյց տուեց կատարեալ բեմ-ական բանքար, մասնաւոր Լեզուկի դերում: Պարոնի խաղը համարձակ կարող եմ ասել պատիւ կը բերէ ոչ միայն սիրողին, այլ և մի ճշմարիտ դերասանին: Միւս ներկայացումներից արժանի են ամեն զովասա-նաց պ. պ. բժ. Ղազարեանցը, Գրիգորեանցը, Ստամ-բուլցեանցը, Աւարաջեանցը եւ Տիգրանեանցը: Կանանց երեքը կատարում էին տ. Ղազարեանցը եւ Կանե-նեանցը: Տիկինը բաւականին լաւ էր իր դերում, իսկ օրիորդին կը ցանկայինք աւելի զգացմունք:

Կարծի հասարակութեանը մ'տուէ և միայն շնորակալ լինել ուսուցչական խմբից, որ է եւ Թատրապիտաց խումբը:

Բացի դրամանցանց, որ ստանում է ժողովուրդը Թատրոնից, վերջինի եկամուտները դնում են յօդուտ ուսումնարանի եւ ինչպէս լոււմ ենք, խումբը կամե-նում է ձեռնարկ ընթացքում տալ 10 ներկայացումն, որոնցից առ նուազն կը մնայ ուսումնարանի համար 1000 ռուբլ: Եւ նկատի առնելով տեղիս երկուսը դպրոց-ների անհասանձիկ նիւթական միջոցները, յիշեալ գու-մարը անելով չի լինի ուսումնարանի համար: Ահա ե-րեք ամիս է, որ սկսվել է ուսումը, իսկ հոգաբարձու-թիւնը դեռ եւս միջոցներ է որոնում ուսումնարանի

բիւրօնները լիարժեք, եւ ի թիւս միջոցներ զետեղել է եւ ծառայողները եւս լիարժեք: Որքան ժողովրդին մտնում է միայն աշակերտ լինելու ներկայացումը, իսկ նրանք, ինչպէս ցոյց տուցին վերջին ներկայացումը, աւելանում են մեծ եկամուտներ բերելու: Ով որ մօտ տեսել է խմբի աշակերտները, նա յիշատի կը գործանայ անդամների անմահութեանը:

Խօսելով խմբի անդամների մասին, չեմ կարող արժանանալ չի զիջել երկուսին սոցանից: Սրանք են երկու բժիշկ Կ. Կ. Գ. Կապուստինսկի եւ Ա. Ղազարյանց: Ձը նայելով որ իրանք զբաղված են արքունական ծառայութեամբ, հանգստութեամբ, ծառայութեանը սուղատի քանի ժամերը լիակատար նուիրել են ուսումնարանին: Բայց աշխատութեանը ծառայութեան գործում, Կ. Ղազարյանցը անո տարուց աւելի կատարում է ծրարաբար տեսչի պաշտօնը եւ այս ուսումնական տարվայ սկզբից յամեն է առել բնական պատմութեան ծրարաբար ստուգելը, նոյնպէս եւ Կ. Կապուստինսկի զարս իր եկած օրից (մարտ ամիսը), ծրարաբար ուսուցիչ լիակատարութեամբ է յանձն առել: Այդ փոքր աշխատութեան չէ, եւ հասարակութեանը պէտք է ի սրտէ շնորհակալ լինի յիշեալ աշխատանքին, նրանց օգտակար գործունէութեան համար:

Կ ար ս ե ց ի

ՆԱՄԱԿ ԴՁԼԱՐԻՑ

Հոկտեմբերի 16

Ղազարի երկուստարաց մէջ յոգացաւ մի աշխատանք, որն էլ վաճառի հայերին, որոնք սովորաբար տանջվում են: Ստորագրութիւնը դեռ շարունակվում է. իսկ ինչ որ կանխիկ ստացվել է, ընդ մէջ ուղարկում եմ ձեզ խնդրելով, որ ի միասնութեամբ նուիրողաց տպագրէք նոցա անունները: Ահա նուիրատուները: Աստուածատուր Կապուստինսկի 10 ռ., Ուն 3 ռ., Մարգ. Ալիշեան 1 ռ. 50 Կ., Հեղինէ Ալիշեան 1 ռ. 50 Կ., Գ. Ղազարյան 1 ռ., Մարքիս Գառնիկեանց 50 Կ., Գառնիկեան Ալեքսանդր 1 ռ., Ստեփան Մանվելեան 3 ռ., Մկրտիչ Ջանջուզեան 1 ռ., Աւար Թանգիւեան 1 ռ., Ստեփ. Միրզով 3 ռ., Նիկ. Ափստանիկեան 3 ռ., Ոսկան Գալանթար 10 ռ., Յար. Իսահակեան 2 ռ., Խաչ. Յունցի 2 ռ., Ղազարեան 2 ռ., Պոլեան 1 ռ., Խաչ. Տարապեան 1 ռ., Ստեփանեան 1 ռ., Մակարով 1 ռ., Յով. Ստեփանեան 2 ռ., Յարութիւնով 1 ռ., Պետ. Մանուկեան 3 ռ., Գրիգ. Տարապեան 50 Կ., Ուն 1 ռ., Օհան Բալասան 1 ռ., Մի հայ 5 ռ.: Ընդամենը 63 ռուբլի: Մի ռուբլի պահում է փոստի ծախքի համար:

Սարգիս Գառնիկեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱՐԻՑ

Թիֆլիս, 28 հոկտեմբերի

Կարողով ձեր պատուական լրագրի մէջ ծառայողներին ներկայ տվելու հրովանդակը, մենք մի քանի ուսանողներս հաւաքեցինք երեսուն ռուբլի տասն կօպէկ (30 ռ. 10 Կ.), որը խնդրում ենք բարեհաճէք հասցնել վաճառի սովորներին, տպագրելով ձեր լրագրի մէջ նուիրատուանք անունները: Մ. Ս. Թաւադեանց 3 ռ., Ե. Մարտինեանց 3 ռ., Մի ուն 1 ռ., Արշակ Ճշմարիտեան 1 ռ., Նիկողայոս Սարգսեան 1 ռ., Մարգար Չարաբեան 1 ռ., Յովհաննէս Սարգսեան 1 ռ., Կարապետեան 50 Կ., Պապուկեանց 1 ռ., Աւարեանց 1 ռ., Ուն 1 ռ., Արշակ Աղամեան 3 ռ., Ա. Արդեան 1 ռ., Ուն 1 ռ., Ղազարյանց 1 ռ., Գ. Վարդապետեանց 1 ռ., Օհանջանեանց երկու եղբայր 2 ռ., Յովհաննէս Արեւեան 1 ռ., Միրաբեանց 1 ռ., Կիւրճիանցիկի Մարգարեանց 1 ռ., Վարդապետեանց 1 ռ., Մանուկեանց 1 ռ., Խորոզեանց 1 ռ., Բաղդեանց 60 Կ., ընդամենը 30 ռ. 10 Կ.:

Աւանդողների խումբը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» բաժանորդագրութիւնը եկող 1881 թ. համար արդէն սկսվել է, մի քանիսները արդէն զգուշանում են: «Մշակի» տարեկան դիմը 10 ռուբլ է: Ամեն տարի յունվարի 1-ից մինչ երկու շաբաթ շարունակ լրագիր էինք հրատարակում, բայց եթէ այս տարի ստորագրութիւնը վաղ սկսվի, օրինակ նոյեմբեր ամսից արդեն կը դրվեն, մենք կարող ենք զգուշանալ ժամանակամիջոցը եւ փոխանակ երկու շաբաթվայ միայն մի 2 ա թ ա թ չը հրատարակել մեր լրագիրը տօն օրերին:

Հին-Նախնական դարերի Աղա պիւղից մեզ գրում են: «Օրերումս Կ. Ս. մեզանում ցորեն էր ժողովում: Գանձակ դիւրի համար, որ «Օրերումս» դէպի արեւելք հինգ վերստ հեռաւորութեամբ է գտնվում: Տուեցինք 10 պուդ, բայց զարմանում ենք ով պէտք է ուտէ այդ ցորենը եւ ինչ նպատակով է ժողովվում այդ մեծքը»:

ՕՐԴՈՒՄԹԻՑ մեզ գրում են, որ այժմ այդ քաղաքում զանազան հիւանդութիւններ են տիրում: Թէիւրապային բժիշկ յունի Օրդուբաժը, բայց վիճակը կան բժիշկ Կ. Փ. Բարեկոչեանը է կատարում իր գործը եւ չէ խնայում ոչ որին իր օգտակար խորհրդները:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ մեզ գրում են, որ նորերումս այդ քաղաքում մի հայ կին իր ծննդական ցաւերից ազատվելով, պարզեց իր ամուսնուն մի անդամից երեք զաւակ, այն է մի աղջիկ եւ երկու տղայ: Երեք մանուկն էլ կենդանի եւ առողջ են:

Օրերումս ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ հաշտարար դատարանում, ինչպէս մեզ հայտնի է, վճռվեց հետեւեալ գործը: Անցեալ տարի գաւառապետը նահանգապետի հրամանով կալանաւորել էր մի թուրքին, որպէս Վիրիից փախածին, բայց դատարանը արդարացի կալանաւորվածին, որովհետեւ մեղադրվածը կարողացաւ հաստատել զօրաւոր փաստերով իր պարսկաստանցի հպատակ լինելը: Այժմ, ինչպէս լսվում է, թուրքին է տալիս ով ով ուղարկելու են նայրեկը:

ՇՈՒՇՈՒՑ Կ. Արէլ Ապրեսեան, որ մեր թղթակիցն է, խնդրում է մեզ յայտնել հետեւեալը: «Շատերը այստեղ կարծում են, որ Շուշու դպրոցում շաքար եւ թէյ ընդունելու լուրը եւս եւմ հաղորդել, այդ պատճառով եւս պարտաւորութիւն եմ համարում յայտնել, որ լուր հաղորդող եւս չեմ»:

Հոկտեմբերի 27-ին, ԹԻՖԼԻՍԻ երկրորդ բանի հաշտարար դատարանում ընկվում էր նախկին ցեւոր Բոլշակովի եւ «Тифлисск. Вѣстникъ» լրագրի նախկին խմբագիր իշխան Կոնստանտին Ալեքսանդրեան Բէհրուզովի գործը: Իշխան Բէհրուզովը մեղադրվում էր Բոլշակովից այն բանի մէջ, որ նա ցենզուրական կօմիտեին իր տուած քաջատրուքեան մէջ վիրաւորել էր Բոլշակովին: Հաշտարար դատարանը մեղաւոր գտաւ իշխան Բէհրուզովին եւ դատաւարտեց նրան 100 ռուբլ տուգանքի, իսկ եթէ անկարող լինի տուգանքը վճարել, հաւաքովախօսի մէջ երեք շաբաթով բանտարկութեան դատաւարտեց:

ՄՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են Հոկտեմբերի 23-ից հետեւեալը: Թէկայի մէջ կատարվող բանակցութիւններն դանդաղ ընթացքը ճշմարիտ է այստեղ ոչ ոքի չէ զարմացնում, բայց այնուամենայնիւ ամենքի վրա ծանր տպաւորութիւն է գործում: Բանակցութիւնները կատարվում են Չերնոգորիայի եւ Թիւրքիայի ներկայացուցիչների մէջ ծովապետ Սէյմաւրի ներկայացուցչի օգնութեամբ: Բայց, ասում են, որ միւս հինգ պետութիւնների նաւատորմների ներկայացուցիչներն էլ կը մասնակցեն բանակցութիւններին: Չերնոգորիայի պահանջում են, որ Վուլցինի իրանց յանձնվել ճշմարտութեամբ եւ որ Թիւրքաց գործերը մնան քաղաքի մէջ մինչեւ այն ժամանակ, երբ չերնոգորիները կամրանան Վուլցինի մէջ եւ կապահովեն իրանց ալբանցիների յանձնարածակի յարձակումները: Այս վերջին պահանջը չափազանց օրինաւոր է մանաւանդ այն պատճառով, որ ալբանցիներին Կ. Պոլսից մինչեւ այժմ շարունակ խրատուում են: Գեռ երէկ «Վալիթ» լրագիրը յայտնեց, որ «Լեթ Լաբուան» ի նկատի չէ առնի Բ. Դրան վերջին շրջաբերականի մէջ յայտնած մեկնութիւնները, ալբանցիները կը գոհնեն իրանց կեանքը, մանաւանդ որ նրանք այժմ աւելի լաւ զինաւորված եւ կազմակերպված են: Բերլին կօնֆերենս

ցիայի ժամանակ պետութիւնների ներկայացուցիչները վճռեցին՝ Թիւրքիային ժամանակամիջոց չը տալ Վուլցինի Չերնոգորիային յանձնելու համար, քանի որ փորձը ցոյց է տուել, թէ ժամանակամիջոցների տալը աւելի էլ դժուարացնում է գործը: Յետոյ պետութիւնների ներկայացուցիչների մեծամասնութիւնը յայտնեց Բ. Դրան, որ Պոլսիցից ժամանակահատուկ բնակիչների գործակատարները ի նկատի կառնվեն: Բայց այդ անգլիական դեսպան Կ. Պոլսին խնդրեց չերնոգորիական իշխանին բանակցութիւնները հետացնելու համար բոլորովին արձակել կալանաւորված քաղաքական յանցաւոր մահմետականներին: Չերնոգորիական իշխանը պատասխանեց, որ յանցաւորներին ընդհանուր ներումն կը չնորհի եւ կալանաւորված մահմետականներն էլ կարճապէս, երբ Վուլցինի յանցանքներն չերնոգորիների ձեռքը: Բայց պետութիւնների ներկայացուցիչները առանց բանակցութեան շարունակ խորհուրդներ են տալիս սուլթանին հարցը խաղաղութեամբ եւ շուտով վերջացնելու համար: Մի քանիսը հաւատարմութեամբ են, որ Ռուսաստանը դժուար է Չերնոգորիային մեծացնել իր պահանջները, բայց այդ բոլորը անհիմն լուրեր են: Ենթադրական դեսպանատանը թըշնամար են խօսում Բ. Դրան մասին եւ պնդում են, որ անհրաժեշտ է Թիւրքիայի դէմ ստիպողական միջոցներ գործ դնել, եթէ այս անգամ էլ զիպոմտիայի աշխատանքները անպտուղ մնան: Թիւրքաց լրագիրներն էլ չեն խնայում ոչ Ենթադրականի ոչ Յունաստանին: Օրերումս «Թիւրք» մանի Հալիկաթ» հետեւեալ նկատողութիւնն արաւ. «Եթէ մենք միայն Յունաստանի հետ գործ կունենանք, Ալլահը մեծ է, իսկ եթէ Յունաստանի եւ Ղազարտօնի հետ, Ալլահը այնուամենայնիւ մեծ կը մնայ»: Կորեումս աւստրիական դեսպան բարօն Վալցեյց այցելեց սուլթանին եւ ասաց նրան, որ դատարի բառերը եւ խոստումները ոչինչ նշանակութիւն չունեն եւ որ Լաբուան անհամբերութեամբ սպասում է արագ եւ վճռողական գործողութիւնների: Սուլթանը յայտնեց, որ ինքն էլ անհրաժեշտ է համարում, որ հարցը շուտով վճռվի եւ աւելացրեց, որ նա կարող է միայն խաղաղութեամբ գործել եւ երբեք չէ համաձայնի ալբանցիների դէմ ստիպողական միջոցներ գործադրել: Սուլթանը մի քանի ժամանակ յոյս յայտնեց, որ Վուլցինի չարացի հարցի վճռելուց յետոյ իրան ներքին զինուոր չեն պահանջի վիճել միւս հարցերի վճռելը: Սայիդ-փաշայի գործերը, ինչպէս երեւում է, դեռ լաւ են գնում: Բայց եթէ Վուլցինի ընկնի չերնոգորիների ձեռքը, երեւի նա հրաժարական կը ստանայ, իբրեւ մի միջնորդ, որի պաշտօնավարութեան ժամանակ Թիւրքիան միշտ անաշուղտութեան է հանդիպում: Իսկ յոյս լուր տարածվեցաւ, որ աւստրիական դեսպանը, ի նկատի առնելով գործերի ծանր դրութիւնը, խնդրեց արտաքին գործերի միջնորդ Լաբուանից եւ Սայիդ-փաշայից խաղաղութեամբ վերջացնել չերնոգորիական հարցը: Լաբուան միջնորդներն էլ խոստացան կատարել դեսպանի խնդիրը:

«République Française» լրագրին Յեռնիէից հեռագրում են Հոկտեմբերի 27-ից: Բոսո Պետրովիչ առաջարկեց Բիզա-փաշային տեսնել միմեանց հետ Հոկտեմբերի 28-ին: Այդ առաջարկութեանը Բիզա-փաշա դեռ եւս պատասխան չէ տուել: Մի և նոյն ժամանակ յայտնի է, որ Բիզա-փա-

շա պատրաստվում է ընդդիմադրել չերնոգորիներին: Կորեումս լուր տարածվեցաւ, որ Չերնոգորիան կենտրոնացնում է Վիւտարիի մօտ իր բոլոր պատերազմական ուժերը: Իսկ Բիզա-փաշա հրամայեց ալբանցիներին պատրաստվել չերնոգորիներին հանդիպելու համար: Եթէ պետութիւնները վճռողական մի քայլ չեն առնի, կամ չեն ուղարկի իրանց ներկայացուցիչներին բանակցութիւններին մասնակցելու համար, դժուար է գուշակել, որ գործը ինչպիսի հետեւանք կունենայ:

„Polit. Corresp.“ լրագիրը Բերլինից հոկտեմբերի 21-ից ստացել է հետեւեալ թղթակցութիւնը, որին լրագիրը առանձին նշանակութիւն է տալիս: Վուլցինի գործը դեռ եւս վճռված չէ: Վարկի է պընդել, որ այդ գործը առաջ չէ գնացել Բ. Դրան հոկտեմբերի 10-ի յայտնութիւնից յետոյ, որ մեծ ուրախութիւն պատճառեց: Հոկտեմբերի 10-ին եղած տրամադրութեան մէջ այժմ մի զանազանութիւն է նկատվում: Լաբուան սկսում է անհամբերութեամբ նայել նոյնպէս եւ Չերնոգորիայի վրա: Եթէ Թիւրքիան կը կատարի իր խոստումը եւ կը յանձնի Վուլցինի առանց պատերազմի, այս դէպքում Լաբուան չի պաշտպանի Չերնոգորիայի այն պահանջը, որ Թիւրք գործերը ապահովեն չերնոգորիներին ալբանցիների յարձակումներից: Լաբուան պահանջում է միայն, որ Վուլցինի անցնի Չերնոգորիայի ձեռքը, իսկ այնուհետեւ նա չի հետաքրքրվի արդեօք այդ քաղաքը կը մնայ չերնոգորիներին, թէ ոչ: Բացառութիւն է կազմում ի հարկէ միայն Ռուսաստանը: Թիւրքաց քայքայվող պետութեանը ազատութիւն է տրվում: Թող Բ. Դրանը մի փոքր հաւատարմութեամբ իր խոստումներին, մի փոքր հաւատարմութեամբ եւ գիտակցաբար վարվի եւ Լաբուան երկար ժամանակ նրանից ոչինչ չի պահանջի: Կա կարող է յեռաւորել թէ յոյսն ական եւ թէ հայկական խնդիրները եւ թէ օգուտ կը քաղէ Լաբուայի լուծութիւնը եւ մի քանի բարեխաղութիւններ կը մոցնի երկրի մէջ, Բ. Դրանը կարող է հաւատացած լինել, որ դեռ եւս նրա գոյութիւնը շատ տարիներ կը տևի: Լաբուական բոլոր պետութիւնները սատիկ ցանկանում են թողնել արեւելեան խնդիրը եւ մի այլ հարցով ըզբաղվել: Եթէ արեւելեան խնդիրը չէ վերջանում, դրա պատճառը Թիւրք ստորաշառնակների կամակորոպութիւնը եւ կօրուութիւնն է: Հէնց որ Վուլցինի խնդիրը կը վերջանայ, Լաբուան այլ եւս չի հետեւի Ղազարտօնի քաղաքականութեանը: Պոլսից յետոյ պետութիւնները առանձին կը գործեն, բայց դա էլ կանխված է Բ. Դրանից, որ կամ չէ նկատում իր ազատութեան միջոցները, կամ չէ կարողանում նրանից օգուտ քաղել:

ՄՐՏԵՐԻՆ ՀԵՈՒՄՈՐԻՑՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբեր: Պետական բանկի 50% տոմսակր առաջին շրջանի արժէ 95 ռ. 37 Կ., երկրորդ 92 ռ. 75 Կ., երրորդ 93 ռ. 25 Կ., չորրորդ 92 ռ. 87 Կ., ներքին 50% տոմսակր փոխառութեան տոմսակր արժէ 218 ռ., երկրորդ 212 ռ., արեւելեան տոմսակր փոխառութեան տոմսակր արժէ 90 ռ. 75 Կ., երկրորդ 90 ռ. 87 Կ., երրորդ 90 ռ. 50 Կ., ոսկի 8 ռ. 13 Կ.: Ռուսաց 1 ռուբլ օսկոյ, նի վրա արժէ 21 1/2 պէսն, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ 206 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա 257 ֆր.

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

